
Մամլոյ Հաղորդագրութիւն

Հ.Բ.Ը.Մ.ը Կը Յիշատակէ Արցախեան Երկրորդ Պատերազմի Ծաւալման Առաջին Տարին

27 Սեպտեմբեր 2021

Անմիջապէս Հրատարակութեան Համար

2020-ի Սեպտեմբերի 27-ին, Հայաշխարհը դաժան սթափում ապրեցաւ, մեր հայրենիքի ազգային պահովութեան ուղղուած սպառնալիքին դէմ հանդիման գտնելով ինքզինք: Այդ ճակատագրական օրուրնէ ասդին, Հայաստանի եւ Արցախի ժողովուրդը, ամենածանր հետեւանքներ յաղթահարելու պարտադրուեցան: Հ.Բ.Ը.Մ.ը, դիմադրական անխախտ ոգիով եւ ապաքինումի դժուարին ընթացքը իրականացնելու հաստատակամութեամբ, կը զօրակցի անոնց:

Պատմական այս իրադարձութեան կապակցութեամբ, բաժնելով իր խորհրդածութիւնները, Նախագահ Պերճ Սեդրակեան կը նշէ՝ «Այդ օրը անկասկած պիտի յիշատակուի որպէս Հայոց Պատմութեան տխուր մէկ նոր պարբերութիւնը: Այսօր սակայն, մենք մեր ուշադրութիւնը կեդրոնացուցած ենք թշնամիին 44-օրեայ անմարդկային վայրագութիւններուն ենթարկուած աղիտեալներուն վրայ: Մեր մտածումները ուղղուած են այն ընտանիքներուն, որոնց սիրելիները զոհուեցան ռազմաճակատին վրայ: Անոնցմէ շատերուն նկատմամբ, որոնք գերեզարուած կը մնան, ռազմական յանձագործութիւնները կը շարունակուին, միջազգային օրէնքի եւ մարդկային պարկեշտութեան սկզբունքներու ոտնակոխումով: Մենք խորապէս հոգածու ենք մեր ծանրօրէն վիրաւորուած զինուորներուն հանդէպ եւ ակնածանքով կը վերաբերինք զոհուած հերոսներու արի հոգիներուն, որոնք յաւերժ պիտի ապրին հայ ժողովուրդի յիշողութեան մէջ»:

Հ.Բ.Ը.Մ.ը, միաժամանակ, հաղորդ է Հայերու նկատմամբ ցուցաբերուած համազգային միասնական ոգիին եւ զօրակցութեան, երբ ճգնաժամ մը յաղթահարելու հրամայականը կը ներկայանայ: Սփիւռքի տարածքին, նուիրատուներու, կամաւորներու, համակիրներու, գործակիցներու եւ բարեկամներու բազմաթիւ նախաձեռնութիւնները եւ օգնելու

պատրաստակամութիւնը, միասնաբար կը մարմնաւորեն մեր կազմակերպութեան անժամանցելի կարգախօսը՝

ՄԻՈՒԹԻԻՆԸ ԶՕՐՈՒԹԻԻՆ Է

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (Հ.Բ.Ը.Մ.) աշխարհի մեծագոյն ոչ-շահամէտ հայկական կազմակերպութիւնն է, նուիրուած հայեցի ինքնութեան եւ ժառանգութեան պահպանումին եւ մշակումին՝ կրթական, մշակութային եւ մարդասիրական ծրագիրներով: Միութեան գործունէութիւնները բարերար ազդեցութիւն կը բերեն տարեկան 500,000-է աւելի անձերու կեանքերէն ներս, Հայաստանի ու Արցախի մէջ եւ Մփիւռքի տարածքին: Իր հիմնադրութենէն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.ը հաւատարիմ մնացած է համայն հայութեան բարօրութեան ապահովումին ուղղուած իր գլխաւոր առաքելութեան:

Յաւելեալ տեղեկութիւններու համար՝ այցելեցէք www.agbu.org կայքէջը:

Յաւելեալ տեղեկութեանց համար

AGBU Press Office

55 East 59th Street

New York, NY 10022-1112

Phone: 212.319.6383

Email: communications@agbu.org